

Քոյսը յոանկայս լսելով Հայրապետի խօսքերը միաձայն ձայնակցեցին և պատասխանեցին երկար կեցցէներով: Աշակերտական խումբը երգեց «Տէր Կեցո զկայսրն մեր, օրհնեբար:

Կառաւարկեալ օգնականը առաջարկեց հորին վեհափառութեան կենացը, բարեմաղթելով հորան երկար և գործունեայ կեանք իւր հօտը հովուելու և մխիթարելու համար: Լսուեցին երկար կեցցէներ ինչպէս բոլոր ժամանակ այս անգամ ևս ճեմարանի երգեցիկ խումբը իւր ներդաշնակ երգեցողութեամբ երգում էր կենաց բաժակին «Թող բարձրացնեն» երգը: Ահա այդ ժամանակ խորէն ծ. վ. Ստեփանէն, որ ինչպէս միշտ այս անգամ էլ կանգնած էր վեհափառի մօտ, հրա հրամանները կատարելու առաջ անցաւ միաբանից կարգը և այնտեղից մեծ ոգևորութեամբ դրուատեց հորին վեհափառութեանը միաբանութեան կողմից, յայտնելով այն միտքը, թէ ամբողջ ազգը և մենք միաբաններս անհուն սիրով և սրտով միացած լինելով հրա անձի հետ, ոգևորուելով հրա անցած փայլուն գործերով, անչափ ուրախացած ենք այսօր հրան մեզ Պետ, Կլուխ տեսնելով, Ս. Էջմիածնի Հայրապետական գահիրայ բազմած: Մենք ամենքս էլ յոյսերով լի ենք, որ հա կառաջնորդէ մեզ գէպի այն լոյսը— յառաջագիւտութիւնը, որ հա քարոզել է իւր կեանքում: Աշակերտները երգեցին «Տէր կեցո մաղթանքը:

Վեհափառը նորից բարեհաճեց կենաց բաժակ առաջարկել յայտնելով այն միտքը, որ սիրում է յաճախ կրկնել:


«Խորէն վարդապետ մեծ - մեծ գոյնտից խօսքեր շուրջեց ինձ համար, բայց ես կճանաչեմ զիս՝ այդ մեծաշնչին բառերէն երբեք իմ սիրտս չի բարձրանար: Կ'սան զի գիտեմ թէ մի մարդ, այն էլ իւր ծերութեան հասակում, միայն ոչինչ կարող է գործել առանց օգնականի: Գիտեմ ու կը հաւատամ, որ իմ փոքրիկ հօտ՝ Հայոց ժողովուրդն ինձ պիտի օգնէ: Այլ իմ մերձատուր և անմիջական օգնիչը դուք էք, սրբազան եղբարք, և համայն

միաբանութիւն սուրբ Գրիգորի տան, որոնք ինձ հետ միացած՝ պէտք է աշխատենք երկրին և մեր ժողովրդեան համար:

Աստի կառաջարկեմ իմ այս բաժակ բոլոր իմ գործակից միաբանութեան կենաց համար, որ հաւատարիմ մնալով իրենց ուխտին, ի մի սիրտ և հոգի աշխատին ի փառս Աստուծոյ և ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյ:

Այս բաժակը միւսների նման ընդունուեց բուն ոգևորութեամբ, իսկ աշակերտները երգեցին «Ի բիւր ձայնից բնութեան շքեղ հրաշալի երգը: Ճաշը արգէն վերջացել էր: Վեհափառը օրհնելով՝ մեկնեց: Վեհափառի յատուկ հրամանաւ առանձին հագացողութիւն եղաւ աղքատներին ու խեղճերին, որոց համար առանձին սեղան կազմուեցաւ:

ՄԵՍՐՈՎԵՐ Վ. Տ. ՄՈՎԱՍԵՍԵԱՆ:



ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՆՈՒՆԴԷ

ԱԼԱ ԿՈՅՍ ՅԵԱՍՏԻ
ԵՒ ԵՆՈՒՆԴԷՆ ԿՈ-
ՅԵԱՍՏԻՆ ԶԱՆՈՒՆ ՆՈՐԱ
ԷՄՄԱՆՈՒԷԼ, ՈՐ ԹԱՐԳ-
ՄԱՆԻ ԸՆԴ ՄԵԶ ԱՍ-
ՏՈՒԱՆԻ, ԵՍԵՍԻ, Է. 14.



արթուցիչ սուրբ ձայնէ այս-
մարգարէի ձայն, խորալէի մը-
խիթարիչ ձայն: Անցան դա-
րեր, խորալէը զօրանում էր՝
պայծառ ապագան նախատես-
նելով: Կորցնում էր մարդ իւր
ներքին մխիթարութիւնը, մար-
գարէի ձայնից լցւում էր յու-
սով և մխիթարւում երկպառակւում էր ին-
քն իւր մէջ, աղերսական աչքէր գարձնում
հորա վրայ, որ պէտք է քարս Բանի - քանի

ժամանակ առաջ էր, երբ դեռ Յակոբ նա-
հապետը պառկած մահուան մահճի մէջ՝ մը-
խիթարում էր իւր որդիներին. «Մի պակա-
սեցէ իշխան ի Յուդայ և մի պետ յերանայ
նորա, մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հան-
դերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթա-
նոսաց»։¹ Այս էր պարզեւում՝ նահապետն
իւր որդիներին և այս մեծ ընծայ էր, վասն
զի կանխատեսութիւն էր այն անձի, որ ան-
վերջ միխիթարիչ պէտք է լինէր ամենքին.
մինչև անգամ «նա է ակնկալութիւն հեթա-
նոսաց»։

Դու խորայել, այդ ի՞նչ միխիթարութիւն էր.
դու սեփական ժողովուրդ Աստուծոյ, այդ ո՞վ
պէտք է գար. դուք որդիք Ադամայ, ի՞նչ էիք
կորցրել և նա ի՞նչ պէտք է տար. Աստուծոյ խօ-
սէ՛ խորայել, ձայնիկդ է՝ մեզ խրատ։

Ի՞նչպէս ողբալի է այն օրն, երբ Ադամն,
առաջին մարդն, անհնազանդութեան մէջ ըն-
կաւ. Սեղծեց Աստուած նորան, դրախտի
մէջ դրաւ նորան և նա երջանիկ էր. նա վա-
յելում էր Աստուծոյ ներկայութիւնը, նա Աս-
տուծոյ շուրհի տակ բարեկեաց էր. և նորա
մէջ բարւոյ ձգտումն ու տրամադրութիւնը
տիրոջ էր։ Նա՛ որ միացած էր Աստուծոյ հետ,
կգգա՞ր թշուառութիւն. նա՛ որ վայելում էր
Աստուծոյ շնորհը՝ կհակուէ՞ր դէպի չարիք.
Բայց մարդը չիմացաւ այս. բախտաւորութեան
մէջ ո՞վ կմտածէ թէ՛ անբախտութիւն կոյ.
Եկաւ սատանան օձի պէս սողալով, նա՛ որ
աստուածանալ, կամեցաւ՝ վաճառեց ան-
դունդի մէջ. նա նախանձում էր մարդուն,
ուստի և քաղցր խօսքերով ձայնեց՝ թէ կեր
այս պտուղն և դու Աստուած կդառնաս.
Պտուղը հնազանդութեան առաքիյ էր. ու-
տել՝ ըմբոստութիւն էր Աստուծոյ դէմ, հը-
պարտանալ էր Աստուծոյ նկատմամբ. ծանր
մեղք էր այդ, որ պէտք է բաժնէր մարդուն
Աստուածանից, «դի մեղք միայն օտարացու-
ցանեն զմեզ յԱստուծոյ»։

Եւ ի՞նչ ինքնահնազանդութիւն. նա մարդ էր,
արարած էր և ուղւում էր լինել այն, որ նո-
րան սեղծել, նորան հոգի էր փչել, կենդա-
նութիւն էր տուել և որից կախում էր նո-
րա շունչը. Անհնազանդութիւն, այլ և այս-
քան երախտազանդութիւն. Ասկայն չարիքը
մեղսագործութիւնն էր. մարդն ընկաւ օտա-
րացաւ Աստուածանից, խոնարհուեց մեղքե-
րին և երկիրը քաշեց նորան դէպի ինքն.
Մինչդեռ հոգեւոր գորութիւնը նորան եր-
ջանկացնում էր, երկիրը քաշեց նորան և
հնչեցրեց Աստուծոյ խօսքն. «հոգ էիր և ի հոգ
գարձիս»։

Երկպառակուեց մարդը. հոգին ձգտում էր
դէպի իւր առաջուայ երջանկութիւնը, բայց
մարմինը՝ ծանր մեղաց տակ էր. Մարմինն
իշխում էր նորա վրայ, վասն զի Աստուածա-
նից այլ ևս չէր զօրանում. նորա հոգին,
Մարդիկ ընկան թաւալուեցան մեղքի մէջ և
ահա սոսկալի օրէնքը ծանրացաւ նոցա վրայ.
տաժանելի լուծ էր այդ ամեն տեղ. մարդ
տքնում էր, ջարդւում էր և անասնի պէս
խորտակւում էր օրէնքի տակ և զգում էր,
որ իւր մեղքերի մէջ լուծ պէտք է կրէ խա-
բող սատանայի լծալարութեամբ. Մարդը
քարկոծւում էր, մորթւում էր գազանի նման.
աշխարհը լծի տակ էր և չէր ուղւում, վա-
սըն՝ զի մարմինն էր տիրող մեղսականու-
թեամբ. Հոգեւորի բարձրութեան մէջ էր և
ուղեցաւ աստուածանալ, ուստի և ընկաւ
մարմնաւոր ստորութեան մէջ հաւատարեցաւ
անասնոց և անբանից։

Խորայելից ձայներ ելան տառապանքի. վրը-
կութիւն էին գոչում և Աստուած պէտք է
փրկէր. Ընկնում էր խորայելն, այդ յոյսը զօ-
րացնում էր նորան. բարձրանում էր, այդ
յոյսը պահում էր նորան. Եկաւ Գաւիթ մար-
գարէն և բարձրացրեց իւր պետութիւնը, յող-
թական փիճակի, սակայն ժողովուրդն ապա-
գայումն էր ոպասում իւր Ոճեալին. եկաւ
և Սողոմոն և իւր տէրութիւնը ամենաճոխ
փառքերի հասցրեց, սակայն թէ Գաւիթ մար-

գարէն և թէ Սողոմոն իմաստունն Օծեալին էին փառաբանում իւրեանց քնարներով:

Իսրայէլը խոնարհուել էր իւր ոյժերի վրայ կտրել էր իւր յոյսը. տեսնում էր որ իւր կեանքի թելը Ստեղծողից է կախուած: Աստուծոյ տուած կենդանութիւնն ու զօրութիւնն է միայն նորան պահողը. նա ուշքի էր եկել և մարգարէն գոչում էր. «Ծնցի որդի, և կոչեացեն զանուն նորա Էմմանուէլ»:

Աստուածանից էինք պառակտուել և Աստուած էր լինելու «ընդ մեզ»: Անդունդ էր բացուել մեր հոգու և մարմնի մէջ, Աստուած պէտք է վերացնէր այդ: Օտարացել էինք Աստուածանից, և Աստուած պէտք է հաշտեցնէր: Պառակտուելով Աստուածանից, յաւիտեան չէինք կարող ազատուել մեղքերի ճանկերից, Աստուած պէտք է այդ բոլոր մեղքերի պատիժը կրէր: մահէն այն դրութեան մէջ, յորում սուղուած էինք, բռնէր ամուր ձեռքով և բարձրացնէր մեզ, դնէր մի ճանապարհի վրայ, որ տանում է դէպի Աստուած: որպէս զի այնուհետեւ մօտեցած Աստուծոյ, զօրանայինք նորանից և տիրէինք մեղքերի վրայ:

Այսօր կատարուեց մարգարէի խօսքը. Աստուծոյ Որդին, Բանն Աստուած իջաւ իւր բարձրութիւնից և ծնուեց կոյսից: Աստուած ծնուեց, ի՞նչ մեծ խօսքեր են: Աստուած ծրնուեց, կայ գորանից աւելի մեծ պարգև մարդկութեան համար: Արարիչը խանձարութիւն մէջ. Արարիչն իւր արարածի գրկում: Արարիչը մանկական հասակում:

Անհնազանդութեան հետեանք էր ծնունդը. Արարիչը ծնուեց մարդկապէս և սրբագործեց մարդու ծննդաբերութիւնը: Հպարտութեամբ գերի դարձաւ մարդ իւր մարմնին և մեղքերի ստրուկ. Արարիչը մարմնացաւ բարձրացրեց այդ հոգապատեանը, մաքրեց և ոչնչացրեց նորա մեղքերը: Պատիժ էր դարձել երկիրը մարդուն համար, չարչարանք էր փար ու ցանքը. մարդացաւ Աստուած, քայլեց իւր Աստուածային ոտերով երկրի

վրայ և սրբեց նորան. մտաւ արտերի մէջ, ծաւալեց իւր շնորհն նոցա արդիւնաբերութեան վրայ և մարդու դառն քրտինքը քաղցրացրեց: Այլ ևս երկիրը պատիժ չէ, այլ պարգև Աստուծոյ. մարդու մարմինը պղծութիւն չէ, այլ աստուածային բարութեան գործիք. հող դառնալը թշուառութիւն չէ, այլ վերջին յաղթանակ հոգու ճշմարիտ գործունէութեան: Մահն այլ ևս կորուստ չէ, այլ մերջ ժամանակաւոր կեանքի և սկիզբն յաւիտեանականի:

Աւրիմն ինչպիսի մեծ սիրոյ ապացոյց է այս մեծ իրողութիւնը մարդկութեան պատմութեան մէջ: «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ. զի ամենայն սր հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկողցի զկեանսն յաւիտեանականս»: ¹

Արչափ անսահման է Աստուծոյ սէրը դէպի մեզ, որչափ ընդարձակ է նորա գութը դէպի մարդկութիւն: Մենք հեռացանք նորանից և ընկանք, նա մօտեցաւ մեզ և բարձրացրեց, մենք կուրացանք հեշտալի ժամանակաւորով և չղիմեցինք դէպի նա, իսկ նա ողորմեց մեզ և ինքն եկաւ և տարաւ դէպի Աստուած ի հաշտութիւն:

Աստուած մանուկ. Աստուած պատանի. Աստուած երիտասարդ. դու ինքնահաւան մարդկութիւն, սորանից աւելի մեծութիւն կուզես, դու հպարտ մարդ, առաւել ևս բախտ կուզես: Չկարողացար մնալ արքայութեան մէջ, բերաւ արքայութիւնը քո մէջ, զրկեցիր քեզ երջանկութեան շողերից, գրաւ քո մէջ երջանկութեան հիմնաքարը: Ահա, կուզես, կլինիս միշտ արքայութեան մէջ, կուզես կզօրանայ երջանկութիւնը քո մէջ, չես ուզի, «արիւն քո ի գլուխ քո եղիցի»:

Նա՛ որ քո ստեղծողն է, ծնուեց և եղաւ «Որդի Մարդոյ», որպէս զի և քեզ «Որդի Աստուծոյ» դարձնէ: «Ծնաւ ըստ մարմնոյ՝ զի դու ծնցիս ըստ հոգւոյ: Ծնաւ ի կուսէ՝ զի

դու ծնցիս յաւաղանէս: ² Առաջին ծննդիցդ կորստի մատնուեցար: այս վերծանութեամբ գտնուեալս: Իսկ մարգկային էր ծնունդդ և անջատուեցար քո երջանկացուցիչ Հոգուց: այժմ ծնունդեա չոգով և փրկուեալս ճըշմարտապէս:

Վերտուեց Քրիստոս խոնարհութեամբ ջրի մէջ: որով ցոյց տուաւ թէ չունի հպարտութեան փշրանքն անգամ: և ահա իջաւ Ս. Հոգին Նորա վրայ՝ տեսանելի կերպորանք տեսելով: Սորանով Քրիստոս սրբագործեց ջուրն և սրբիչ դարձրեց իւր հաւատացողներին համար: Ըստ այսմ՝ պէտք է խոնարհուենք և զգանք մեր անգորութիւնն: հաւատքով դիմենք դէպի Քրիստոս: որպէս զի զօրացնէ մեզ՝ լուսնալով մեր մեղքերն և Ս. Հոգւոյ շնորհը տալով: Ուստի՝ եթէ ոչ որ ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտնել յարքայութիւնն Աստուծոյ: ¹ Ինքն ևս օրինակ տուաւ: երբ մկրտուեց: եկաւ դէպի Յորդանան խոնարհութեամբ: ոչ թագաւորական հանդէսով և ոչ հայրենի ձօխութեամբ: որպէս զի ամեն քրն ևս չտատամսէին մօտենալու Նորոն և վայելելու Նորա քաղցր ճառագայթները: Խըմ բով չեկաւ: որ չասեն թէ՝ դաշն է հաստատել: եկաւ բոլորից առաջ: որպէս զի տեսնեն Նորան և խմբուեն: որպէս ծեռերն արծիւի շուրջը: որպէս հալածուածներ և տըքնաճները Նորս փրկարար հօլմանու տակ:

Չարհաբեց Յովհաննէս Վկրտիչ և վախճանալով այգայիսի հպարտութիւնից: չուզեցաւ կատարել այդ մեծ գործը: կարծես ասելով՝ զիմարդ խոտոյ հնար է մեքձենալ ի հոյք բռնութիւն և ոչ կիզանել: ² Քրիստոս հրամայեց մկրտել: որպէս զի ցոյց տայ այդ վերջին ծայր խոնարհութիւնն: որից յետոյ վառաւորուեց: հրաշապէս: «Ասեւ և ուսուցանել» — այս էր մեր Տիրոջ հիմնական սկզբունքը: Իսկ թէ որքան աննման խոնարհութիւն ցոյց տուաւ: երևում է Վկրտչի նախասացեալ մար-

գարէութիւնից՝ թէ «որ զկնի իմ գայ՝ հոռագայն է քան զիս: և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորայ: ³ Ահա թէ սլմէր խոնարհութեամբ Աստուածամարդն: ահա թէ ումնից է մկրտում՝ Սծեալը:

Խոնարհութեց Քրիստոս երեսնամեայ խոնարհութեց և ջախջախեց մարգկային հպարտութիւնն այդ հաստիւմ: վասն զի այգայիսի հաստիւմ՝ պէտք է հպարտացած և ընկած լինէր առաջին մարդը: ² Բայց յետոյ սկըսաւ ինքն ևս մկրտել և հաւատք քարոզել: մկրտել ի Հոգին Սուրբ և ի հօր: և քարոզել հաւատալ և սրտով դառնալ դէպի մարգացեալ Աստուածը: միանալ Նորա աստուածացեալ մարմնի հետ: որպէս զի բարձրացնէ և տանէ մարդուն դէպի այնտեղ: որտեղից գլորուել էր տառապանքի մէջ:

Բայց մարդիկ սխալական են և կարօտ են մշտական կապակցութեան Քրիստոսի հետ: և ահա Քրիստոս հաստատեց իւր աստուածացեալ մարմինն և արիւնը: Նա տուաւ և Ս. Հոգին: որ բնակւում է իւրաքանչիւր հաւատացողի սրտում և առաջնորդում նորան դէպի ճշմարիտ և յաջող գործունէութիւն: Ըստ որում՝ առանց հաւատոց անհնարին է զլուրը Հոգին ընդունել: ⁵

Եւ քանի մեծ գանձ է հաւատքն: քանի մեծ գործիք է Ս. Հոգին և Քրիստոսին իւր մէջ բնակեցնելու: Այդ հաւատքով ենք զօրանում և Աստուծոյ գործակից դառնում: այդ հաւատքով ենք ճանաչում Աստուծոյ վասն զի «Հաւատք հասուցանեն ի ծանօթութիւն փառացն Աստուծոյ: ⁴ Եւ որովհետեւ Աստուած է իսկական ճշմարտութիւնը: քանի՞ք ըստ պէտք է կրկնել իւրաքանչիւրի համար: որ ունի հաւատք: Քրիստոսի աւետարանչի անմահ խօսքերը: «Ժանի՞րք զճշմարտութիւնն: և ճշմարտութիւնն ազատեացէ զձեզ: ⁵

1. Մատ. Գ. 11. 2. Հնորհայի. 66. 3. Եղիշէ. մատենագր. էջ. 313. 4. Յաճախ. էջ. 152. 5. Յովհ. Ը. 32.

Հոգևոր է մեր փրկութիւնն և Հոգևոր է մեր Հաղորդակցութիւնն Աստուծոյ հետ: այդ Հոգևոր Հաղորդակցութիւնից զօրանում ենք և մարմնապէս: Անտեսանելին տեսանելի դարձաւ, որպէս զի տեսանելի միջոցով զտրթնի մեր Հոգին և բարձրանայ: Անմարմինը մարմնացաւ, որ Նորա մեղութաւի մարմնով փրկուինք: Հաւատքով տեսանելով Քրիստոսի մարմինը, տեսնում ենք Նորան իւր բացարձակ փառաց մէջ. «Իսկ տեսեալ ուրուք զԱստուած, անդէն ի նոյն միացաւ ի նմա»: ¹ Էլ ի՞նչ աւելի երջանկութիւն: քան միանալն Աստուծոյ հետ:

Ահա որքան սերտ կապերով կապում է մեզ Քրիստոս աստուածութեան հետ: Նա մեզ փրկեց, մեր մարմինը սրբեց և աստուածացրեց, կենցաղավարութեան օրինակ և հրահանգ տուաւ և՛ այդ ամենին իբրեւ պատկժող տուաւ՝ որ հաւատքի ոյժով զօրանանք, եթէ իւր մէջ բնակուինք և Նա մեր մէջ: Ըստ այսմ և տուաւ մեզ Ա. Հոգւն, որ բռնակարան հաստատելով հաւատացող մարդու մէջ, առաջնորդում է Նորան դէպի բարին, դէպի աստուածային կամքին համաձայն, դրդում է խոյս տալ չարիքից Աստուծոյ բանին հակառակից, ըստ որում և պահպանում է Նորան այնպիսի կեանքի յաջողութեան մէջ, որ առաւելագոյն արժանիքն ունի Աստուծոյ արքայութեան համար: Աւստի և մեր ոսկեգրիչ ս. Հայրն Եփէզէ գրում է գեղեցկապէս. «Զօրութիւն Հոգւոյն վերայ ի վայր խոնարհեցաւ և հաւատք ներքոյ ի վեր կանգնեցաւ, և բուռն հարեալ զզօրութիւնէն՝ հաստատեալ կայ ի վերջնոյն, զի ձգելով ի վեր կորդեցի: ² Ինչպէս Քրիստոս խոնարհուելով եկաւ մեզ փրկելու, նոյնպէս և Ա. Հոգին իջնում է դէպի մեզ. Նա ուզում է մեզ ճանկել և որոնում է մեր հաւատքն, որից և պինդ բռնելով ձգում է դէպի վեր,

դէպի փառաւորը, դէպի աստուածայինը: Ահաւասիկ թէ քանի ահագին է տարբերութիւնը հպարտութեան և խոնարհութեան մէջ. հպարտութիւնը գլորեց մարդուն դէպի անդունդ, իսկ խոնարհութիւնը բարձրացրեց նորան դէպի աստուածութիւն: Այդ է որ ասում է Քրիստոս՝ «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի»: ¹

Արդ՝ ամբարտաւանութիւնն օտարացնում է մարդուն Աստուծանից, կարծել է տալիս թէ աստուածացնելու է, տանում է դէպի անկումն, դարձնում է անցաւորի ստրուկ և լոկ երկրային, դրկում է նորան Ա. Հոգու իմաստութիւնից, ուստի և երկրի բարիքները սկըսում են նորան տանջել և չարչարել, նեղել և վշտացնել: Ընդ նմին և գազանանում է այդպիսի մարդն, վասնորոյ և օրէնքը գնում է նորա վզին իւր լուծն և լծի վրայ խտտ. սիրա լծավարին:

Մինչդեռ խոնարհութիւնը մարդուն մօտեցնում է Աստուծոյ, զգալ է տալիս որ ինքնն արարած է և Աստուծոյ զօրութեան կաթոս ամուր հաւատք է զարթեցնում դէպի Աստուած և դէպի Փրկիչն, դարձնում է յուսիսեանականի ժառանգ և Աստուծոյ որդի, բարձրացնում է դէպի աստուածայինն, Աստուծոյ պատկերն է վերականգնում, ազա-

1. Մատթ. ԻԳ, 12, Տես և «Հրաւիրակ Երկրին Աւետեաց» էջ. 8.

«Որ ի գահ չորեքկերպեան փառք ընդ Հօր բազմէր յերկինս».

Լոյսն անմատչելի միշտ զնովա պարածածուկ,

Ի մատաղ Վուսին ի գիրկ գրգուեալ եղև որպէս

Մանուկ,

Եւ որում չբաւէր տեղի երկնից տաճար լայնա-

կամար,

Խոնարհեալ նուաստացաւ բովանդակեալ ի փոքրիկ

այր,

Զի նորին խոնարհելովն բարձրացուք մինչ ի

յերկինս».

Եւ մարմնովն նուաստացեալ մեծանայցեմք ի

հոգիս»:

1. Եղիշէ. անդ. 326. 2. Մատենագրութիւն,

տում է օրէնքի լծից և Ս. Հոգու սրբանուէր
գործիք շինում որին համար վայելքներ են
ամբողջ աշխարհի կայքն ու գոյքը:

Խոնարհութիւնը մարդուն հրեշտակ է դարձ-
նում ամբարտաւանութիւնը — հրեշտակին
սատանայ:

Դու Հայ Ժողովուրդ, մի՞թէ կուզես ամ-
բարտաւանութեամբ հպարտանալ:

Ո՛հ, ոչ. դու կխոնարհուես քո Արարչին
առաջ, որպէս զի բարձրանաս գէպի հորա
փառքը:

Ա. ՏԵՐ. ՄԻՔԵԼԵԱՆ.



ԱԶՆԻՒ ԳՈՐԾՈՂԻՆ:

(1893 թ. Գ. ՃԵՄԱՐԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ)

ԿԱՐԴԱՅ ՂԵԼԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋ.

Թող ծանրանայ կեանքի խաչն ուսիդ,
Հէք ժողովրդի հարազատ Դու Հայր,
Թող սև-սև վշտեր կուտակուին սրտիդ,
Ճնշէ անխընայ քեզ պատող խաւար:

Թող կեանքի հոսանքն որպէս մի տաշեղ
Քեզ տարուբերէ իւր ալիքներում:
Թող բիրտ ամբոխը մռնչէ ահեղ,
Ըսպառնայ քեզ ահ, սոսկալի անկում:

Մի՛ յուսահատուիր, ով Հայր ցաւատանջ,
Սուրբ է քո ուխտը վրսեմ քո կոչում —
Ինչպէս անվեհեր մի զինուոր Դու քաջ
Անվրհատ բռնիր դրոշմ քո ձեռքում:

Քայլիր անսասան քո ընտրած ուղին,
Դու, ճշմարտութեան հրգօր ջատագով,

Թէև դժեգակ փուշն է անմեկին
Այնտեղ սրփռուած մահաբեր թոյնով:

Քո քարոզած սուրբ, վեհ զաղափարներ
Պիտ առաջնորդին սիրած հայերիդ
Դէպի փառաւոր, դէպի կենսաբեր
Լոյսը շողշողուն, ուղին ճշմարիտ:

Եւ կը դայ մի օր, երբ ընդարմացած
Հէք ժողովուրդը դառն արցունքով
Կըզգայ իր սխալ և ուշքի եկած
Կը վառէ արձանդ ծաղկէ փունջերով:


Նա կը ծանաչէ անկեղծ, անկաշառ
Իւր բարերարին, իւր ազնիւ գործչին,
Որ չը դըլացաւ իւր կեանքն ոսկեվառ
Ձոհել իւր սիրած, դժուած խեղճ ազգին:

ՍԱՄ. ԴԱԻԹԵԱՆ.

ԱՆ. Գ. ՃԵՄԱՐԱՆԻ Զ. ԴԱՍ.

Ս. Էմիանին

1893. հոկ. 5.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԵՐՐՈՊԵՅԻՆԵՐԻ ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒ- ԹԻՒՆ

(ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՂԱՏԱԿԱՐԱՆԻՑ.)



Նման յիշատակի արժանի Գէ-
որգ Գ. մեծագործ Հայրապետի
հրամանով, յայտնի է, որ ես
Եւրոպայ գնացի մանկավարժու-
թիւն, դպրոցավարութիւն ուսումնասիրելու
Գէորգեան ճեմարանի մէջ դասախօսելու հա-
մար: Բայց Եւրոպայում գտնուած միջոցիս
ճեմարանի հանգամանքները բոլորովին փո-
խուեցան: Ուսումնասիրութեանս արդիւնքը
և նկատողութիւններս մի գրքոյկ կազմեցին,